



HY

# Մատնահետքեր եւ Eurodac

©Stockphoto / janp013

Տեղեկատվություն երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր ձերբակալվել են անօրինական կերպով արտաքին սահման հատելու ժամանակ՝ համաձայն թիվ 603/2013 կանոնակարգի (ԵՄ) 29(3)-րդ հոդվածի

Եթե 14 տարեկան եք կամ ավելի և ձերբակալվել եք անօրինական կերպով սահման հատելիս, ապա Ձեզնից մատնահետքեր կվերցվեն և կհանձնվեն մատնահետքերի տվյալների բազային, որ կոչվում է «Eurodac»: Պետք է համագործակցեք մեզ հետ այս գործընթացի ժամանակ, քանի որ օրենքով պարտավոր եք մատնահետքեր հանձնել:

Եթե Ձեր մատնահետքերը հստակ չլինեն, այդ թվում եթե դիտավորյալ վնասած լինեք Ձեր մատները, ապա մատնահետքերը կարող են հետագայում կրկին վերցվել:

Եթե ապագայում որևէ ժամանակ դիմեք ապաստանի համար, Ձեզնից կրկին մատնահետքեր կվերցվեն: Եթե ապաստանի համար դիմեք այլ երկրում, որը տարբեր է այն երկրից, որտեղ առաջին անգամ վերցվել են Ձեր մատնահետքերը, Ձեզ կարող են ուղարկել Ձեր մատնահետքերը առաջին անգամ վերցրած երկիր:

Ձեր մատնահետքերը կպահվեն 18 ամիս. 18 ամիս անց դրանք ինքնաբերաբար կջնջվեն տվյալների բազայից: Eurodac-ում պահպանվում են միայն Ձեր մատնահետքերի և գենդերային տվյալները. Ձեր անունը, լուսանկարը, ծննդյան ամսաթվի և ազգության մասին տվյալները չեն ուղարկվում տվյալների բազային և չեն պահպանվում:

Ապագայում ցանկացած ժամանակ կարող եք Ձեր մատնահետքերը վերցնող երկրից Eurodac-ում գրանցված, Ձեզ անչվող տվյալների ձեռք բերման խնդրանք ներկայացնել: Կարող եք պահանջել, որ այդ տվյալները ճշգրտվեն կամ ջնջվեն. օրինակ՝ դրանք ջնջվում են այն ժամանակ, եթե դառնում եք ԵՄ-ի կամ ասոցացված պետության քաղաքացի կամ եթե ձեռք եք բերում այդ պետություններից մեկի կեցության թույլտվություն և չեք դիմել ապաստանի համար:

Eurodac-ը կառավարվում է Եվրոպական Միության eu-LISA կոչվող գործակալության կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով: Ձեր տվյալները կստանա միայն Eurodac կենտրոնական համակարգը: Եթե ապագայում ապաստան խնդրեք ԵՄ-ի կամ ասոցացված այլ պետությունում<sup>1)</sup>, ապա Ձեր մատնահետքերը կուղարկվեն տվյալ երկիր՝ ստուգման համար: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի ԵՄ-ից կամ ասոցացված պետություններից դուրս որևէ այլ պետության կամ կազմակերպության:

---

1) **Ձեր մատնահետքերը կարող են փոխանցվել, միայն օրենքով թույլատրված կարգով, 28 ԵՄ անդամ պետությունների և 4 ասոցացված պետությունների՝ Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն, միջև:**

2015թ. հուլիսի 20-ից, Ձեր մատնահետքերը կարող են հետազոտվել ոստիկանության և Եվրոպական ոստիկանության (Եվրոպոլ) կողմից, որոնք կարող են Eurodac տվյալների բազայից օգտվելու խնդրանք ներկայացնել՝ լուրջ բնույթի հանցագործությունների և ահաբեկչության կանխարգելման, հայտնաբերման և հետաքննման նպատակներով:

## Կոնտակտային տվյալներ

### **Eurodac հսկիչի և իր ներկայացուցչի նույնականություն**

Կոնտակտային կետեր՝ Ոստիկանության ազգային խորհուրդ (Poliisihallitus) և Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն (Maahanmuuttovirasto)

### **Վերահսկողի գրասենյակի կոնտակտային տվյալները,**

+ 358 295 480 181

Poliisihallitus (Ոստիկանության ազգային խորհուրդ)

PL 22, FI-00521 Helsinki

kirjaamo.poliisihallitus@poliisi.fi

Maahanmuuttovirasto (Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն)

PL 18, FI-00581 Helsinki

+358 295 419 600

Այդ հարցով ծառայության համարը՝

+358 295 419 627, Երկ-Յնգ 10-11

www.migri.fi

Եթե դուք ցանկանում եք տեսնել ձեզ վերաբերող Eurodachամակարգում գրանցված

տվյալները, անձնապես հայտ ներկայացրեք ոստիկանության բաժանմունք: Ձեզ հետ ունեցեք անձը հաստատող փաստաթուղթ: Մենք խորհուրդ ենք տալիս, որ դուք կապվեք այն ոստիկանության բաժանմունքի հետ, որն ընդունել է ձեր ապաստարանի դիմումը: Ոստիկանական ծառայության բաժանմունքի կոնտակտային տեղեկությունը հասանելի է Ոստիկանության ինտերնետային կայքում poliisi.fi հասցեով:

### **Ազգային վերահսկողության մարմնի (տվյալների պաշտպանության) կոնտակտային տվյալներ**

Tietosuojavaltuutetun toimisto

(Տվյալների պաշտպանության հարցերով օմբուդսմեն)

PL 800, FI-00521 Helsinki

+ 358 295 666 700

Տեղեկատվական ծառայություն՝

+358 295 616 670,

Երկ-Յնգ 9-11 և 13-15, Ուրբ 9-12

tietosuoja@om.fi

www.tietosuoja.fi

### **©Եվրոպական Միություն 2014**

**Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ ամանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:**



Rajavartiolaitos  
Gränsbevakningsväsendet  
The Finnish Border Guard